


Հայոց Կուսական  
կողման Տրամադրութեան



ՀԻՄՆԱԿԱՆ

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

---

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ ԳԱՅԻՐԵ  
ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924 ԻՆ ԼՈԶԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԼՈԶԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԲԱՐԻՔ

---

8

361  
2-25

493

ՅԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

83-88690

## ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՈՒԹԻԱԾ 1

## ՆՊԱՏԱԿ ՀՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Զուիցերիական Քաղաքային Օրէնքին 60-79 Յօդուածներուն ար-  
բամագրութեանց համաձայն հիմնուած է Ընկերութիւն մը՝ Հայկա-  
կան Բարեգործական Ընդհանուր Միութիւն անունով : (\*)

Այս Ընկերակցութիւնը, կազմուած Ընկերակցաբար (corporative-  
ment), պիտի ունենայ իրաւական անձնաւորութիւն (personnalité ju-  
ridique) :

Անիկա կազմուած է յաջորդելու համար «Հայկական Բարեգոր-  
ծական Ընդհանուր Միութիւն» անունը կրող Ընկերութեան, որ 15  
Մարտի 1906ին հիմնուած էր Գահիրէի մէջ (Եղիպտոս), Պօղոս Նու-  
պար փաշայի նախաձեռնութեամբ եւ անոր նախազահութեան տակ,  
եւ որ չէր կրցած իրր քաղաքային անձնաւորութիւն (personnalité civile) ճանչցուիլ եղիպտական օրէնքներու ներկայտրամադրութիւն-  
ներով :

Այդ Ընկերութիւնը վերջնականապէս լուծուած է :

Հետեւաբար, ներկայ Ընկերակցութիւնը պիտի շարունակէ դոր-  
ծը այն Ընկերութեան որուն տեղը կ'անցնի, իր վրայ պիտի առնէ ա-  
նոր գոյքն ու պարտքը, միեւնոյն նպատակներով, այսինքն՝

Ա. - Օժանդակել հայ ժողովուրդին եւ իր հայրենիքին մտաւոր  
եւ բարոյական զարգացման :

Բ. - Օգնել անոնց նիւթական ու տնտեսական վիճակին բարե-  
լաւման :

Գ. - Քաջակերել սոյն արդիւնքները յառաջ բերելու ծառայող ա-  
մէն ձեռնարկ ու հրատարակութիւն :

Ընկերակցութիւնը մարդասիրական հաստատութիւն մըն է .  
ո՛ եւ է քաղաքական կամ առեւտրական հանդամանք չունի : Այս պայ-  
մանը հիմնական է :

(\*) UNION GENERALE ARMENIENNE de BIENFAISANCE



66388-68

Ըստ ներկայ Հիմնական Կանոնագրին տրամադրութեանց, յառաւն Ընկերութեան կնքուած յանձնառութեանց եւ պարտքերու համար, Ընկերակցութեան անդամները ու եւ է պատասխանատուութիւն չեն ստանձներ:

ՅՈՒԹԻՎ 2

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ, ԿԵԴՐՈՆ, ՏԱՐԵՇՐՋԱՆ

Այս Ընկերակցութեան հիմնադիր անդամներն են Կեդրոնական Վարչական Ժողովի ներկայ անդամները եւ լուծեալ Ընկերութեան վերապրոդ հիմնադիրները: Ասոնք են՝

- |                          |                         |
|--------------------------|-------------------------|
| Տ. ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ,    | Տ. ՊՈՂՈՍ ԷՍՄԵՐԵԱՆ,      |
| Տ. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒԽԿԵԱՆ, | Տ. ՄԻՔԱՅԵԼ ՊԱՊԱԶԱՆԵԱՆ,  |
| Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱՌԱԹՈՅ ՊԵՅ,   | Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,   |
| Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ,  | Տ. ԱՐԱՄ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ,    |
| Տ. ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՊԵԱՆ,      | Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ, |
| Տ. ՍԵՐՈՎԲԵ ՄՎԱՃԵԱՆ,      | Տ. Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ,      |
| Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ,     | Տ. ԱՌԱՔԵԼ ՊԵՅ ՆՈՒՊԱՐ,   |
| Տ. ԶԱՐԵՀ ՊԵՅ ՆՈՒՊԱՐ,     | Տ. Կ. ՇԵՐԻՏՃԵԱՆ ՊԵՅ:    |
| Տ. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԵԱՆ,       |                         |

Տարեշրջանը կը սկսի ամէն տարուան Յունվար մէկին:

ՅՈՒԹԻՎ 3

Ընկերակցութեան կեդրոնը Լոզան է. ուրիշ տեղ կրնայ փոխադրութիւն Ընդհանուր Ժողովին որոշումով:

Ընկերակցութեան կեդրոնը այժմ կը դանուի Լոզան, Կրան Շէն վրուց թիւ 8, Նոտար Հ. Ս. Պէրֆիկի գրասենեակը:

ՅՈՒԹԻՎ 4

Ընկերակցութեան տեւողութիւնը անսահման է:

ՅՈՒԹԻՎ 5

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընկերակցութեան անդամ ըլլալու համար պէտք է կեդրոնական Վարչական Ժողովին կամ ստորեւ նախատեսուած Տեղական Մասնա-

Ժողովներէն մէկուն խնդրանք ներկայացնել, եւ կամ երկու անդամի կողմէ ներկայացուիլ: Այդ ժողովը՝ նիստին ներկայ գտնուած անդամներու մեծամասնութեամբ՝ կը քուէարկէ ընդունելութիւնը, յետագայ 14րդ եւ 25րդ Յօդուածներուն տրամադրութեանց համաձայն:

Կարող է անդամակցիլ, առանց սեռի եւ գաւանանքի խտրութեան, ամէն Հայ որ յանձն կ'առնէ յարգել ներկայ Կանոնագիրը եւ կանոնաւորապէս հատուցանել իր անդամակնարը:

ՅՈՒԹԻՎ 6

ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ ԵՒ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Միութեան ամէն անդամ իր ընդունելութեան ժամանակ պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը եւ ամսական անդամակնար մը, ուրոնց քանակը ինք ազատ է որոշելու: Սակայն ոչ մէկ ատեն մուտքի տուրքը Զուիցերիական երկու Փրանքէ եւ ամսական անդամակնարը Զուիցերիական մէկ Փրանքէ պակաս չեն կրնար ըլլալ: Զանազան երկիրներ բնակող անդամներու համար սոյն գումարները պէտք է վերածուին միեւնոյն արժէքը ներկայացնող տեղական դրամներու:

Անդամակնարները վճարելի են ամէն ամիս, եռամսեայ, վեցամսեայ կամ տարեկան, իրաքանչիւր անդամի փափաքին համաձայն:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ, բացառաբար եւ ըստ պարագայի, անդամակնարներուն սակը իջեցնել կարդ մը տեղերու մէջ:

Այս անձերը, որ ընկալեալ սակէն պակաս անդամակնար կը հատուցանեն, պիտի նկատուին Ընկերակցութեան օժանդակ անդամներ: Այս անդամները ընտրող պիտի ըլլան, բայց ոչ ընտրելի:

ՅՈՒԹԻՎ 7

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ, ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

ԵՒ ՑԿԵՄՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Կեդր. Վարչի Ժողովը կ'ընծայէ՝

Ա. Բարերար Անդամի տիտղոսը այն անձերուն՝ որ մէկ անդամէն առնուազն 25000 Զուիցերիական Փրանքի համարժէք նուիրատուութիւն մը կ'ընեն Միութեան:

Բ. Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն՝ որ մէկ անդամէն առնուազն 10000 Զուիցերիական Փրանքի համարժէք նուիրատուութիւն մը կ'ընեն:

Գ. Ձկեանս Անդամի տիտղոսը այն անձերուն որ մէկ անդամէն առնուազն 5000 Զուիցերիական Փրանքի համարժէք մուտքի տուրք կը վճարեն կամ նուիրատուութիւն մը կ'ընեն:

Բաց աստի, Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ այդ տիտղոսներէն մին կամ միւսը տալ այն անձերուն՝ որ բացառիկ ծառայութիւններ կը մատուցանեն Միութեան: Այս որոշումը օրինաւորապէս կրնայ աըրութիւն՝ միայն, Եթէ Կեդր. Վարչ. Ժողովը բաղկացնող անդամներուն առնուազն երեք քառորդին կողմէ ընդունուի:

Լուծեալ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Բարերար եւ Պատուոյ Անդամները իրաւամբ ներկայ Ընկերակցութեան Բարերար Սնդամ եւ Պատուոյ Անդամ են:

ՅՈՒԹԻԱԾ 8

#### ՎՏԱՐՈՒՄ

Ոեւէ անդամ, երբ անարժան վարժունք մը ունենայ, Ընկերակցութեան անդամներու ցանկէն կը ջնջուի, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ, նիստին ներկայ գտնուող անդամներուն երկու երրորդին մեծամասնութեան քուէով, յետագայ 14րդ Յօդուածին մէջ կանխատեսուած պայմաններուն համաձայն:

Իր անդամավճարները կանոնաւորապէս չի հատուցանող ոեւէ անդամ ինքնին կը դադրի Ընկերակցութեան մաս կազմելէ:

ՅՈՒԹԻԱԾ 9

#### ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐԸ ԿՏԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՑՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Միութեան հասոյթները կը կազմեն՝

ա) մուտքի տուրքերը.

բ) անդամավճարները.

գ) կտակները եւ նուիրատուութիւնները.

դ) հանդանակութիւնները.

ե) ուրիշ ամէն հասոյթ որ վերոյիշեալներէն դուրս կը դանուի:

Այս հասոյթները նախահաշիւին (պիտօնէ) մէջ առանձին գլուխներ կը կազմեն, իրենց յատկացման ընդհանուր, մասնաւոր կամ արտակարգ բնոյթին համաձայն:

Բ. Ընկերակցութեան եղած նուիրատուութիւնները եւ կտակները երեք տեսակ են՝

ա) Այն նուիրատուութիւնները եւ կտակները դոր նուիրատուներն ու կտակարարները ըրած են՝ առանց մասնաւոր պայմաններ զնելու դրամագլուխին կամ եկամուտափն դործապահներն կամ եկամուտափն կութեան մասին: Այս կարգի նուիրատուութիւններն ու կտակները ներկայ Հիմնական կանոնադրին մէջ կը յորջուի ջուին «Նուիրատուութիւններ եւ կտակներ առանց մասնաւոր յատկացման»:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ անոնք բարդել, ամբողջովին կամ մասամբ, Հիմնական Դրամագլուխին վրայ, առժամեայ կամ մնայուն Հիմնադրամներ կազմել անոնցմով՝ ձեռնարկներու համար, եւ յամ մայր դումարը ամբողջովին կամ մասամբ դործածել իր յարմար կտած նապատակին:

բ) Այն նուիրատուութիւններն ու կտակները որոնց դրամագլուխին կամ եկամուտափն դործածութեան եղանակը որոշ է նուիրատուներուն եւ կտակարարներուն կողմէ: Այս նուիրատուութիւնները եւ կտակները կը յորջուի ջուին «Նուիրատուութիւններ եւ կտակներ մասնաւոր յատկացման ներով»:

Սոյն նուիրատուութիւնները եւ կտակները «Հիմնարկութիւն» կը յորջուի ին, երբ անոնց դրամագլուխը անձեռնմխելի հանդամանք ունի՝ նուիրատուներուն եւ կտակարարներուն կամքին համաձայն:

Երբ առանց մայր-դումարն է որ միանդամ ընդ միշտ պէտք է դործածուի ձեռնարկի մը, անոնք կը յորջուի «Սպառելի Շուրիքատուութիւններ եւ կտակներ»:

Մասնաւոր յատկացումներով կտակներ եւ նուիրատուութիւնները ընող կտակարարներու եւ նուիրատուներու դրած պայմանները պէտք է որ խղճմտօրէն յարգուին: Եթէ, ժամանակի հոլովմամբ, Կեդր. Վարչ. Ժողովը տեսնէ որ նիւթապէս անկարելի է դործադրել դրուած պայմաններէն մէկը, պարտի, պատճառաբանեալ որոշումով մը, անիկա բարեփոխել, ըստ կարելոյն մօտենալով կտակարին եւ նուիրատուին մտադրութեան:

գ) Այն նուիրատուութիւնները եւ կտակները որոնց համար նուիրատուները եւ կտակարարները ոեւէ մասնաւոր յատկացում չեն որոշած, դրամագլուխին եւ ոչ ալ եկամուտափն

համար, բայց որոնց համար, ի փոխարէն, պայման դրած են որ Ընկերակցութիւնը կարդ մը պարտաւորութիւններ ստանձնէ : Այս նուիրատուութիւնները եւ կտակները կը յորդ ջորջուին «Պարտադիր նուիրատուութիւններ եւ կտակներ» :

Այս պարտադիր նուիրատուութեանց եւ կտակներու դրամագլուխը մաս կը կազմէ սեփական գոյքին Ընկերակցութեան՝ որ ըստիպուած է դործագրել իր յանձն առած պարտաւորութիւնները :

Գ. Հասոյթները իրենց յատկացուաններուն կը դործածուին ընդհանուր ծախքերը ղեղչուելէ վերջ, կեդր. Վարչ. Ժողովին կողմէ պատրաստուած նախահաշիւի սահմանին մէջ :

Վարչական ժողովը յաջորդ տարեցրջանին կրնայ լուսանցել հասոյթներուն զուտ արդիւնքին մէկ մասը :

Ընկերակցութեան ընդհանուր ծախքերը սիրտի հողացուին հետեւեալ միջոցներով՝

ա) հիմնական Դրամագլուխին եկամուտներուն այն մասը որ նախահաշիւով որոշուած է .

բ) մասնաւոր դրամագլուխին եկամուտներէն գանձուած վարչական ծախսաբաժինը, 10րդ Յօւուածին 2րդ հատուածին տրամագրութեանց համաձայն .

գ) նուիրատուններուն եւ կտակարաններուն կողմէ յատկապէս ծախքերու համար եղած նուիրատուութեանց եւ կտակներու դրամագլուխին ու եկամուտը .

դ) բոլոր սպառելի նուիրատուութեանց եւ կտակներու 5%ը .

ե) բոլոր հանդանակութեանց 5%ը .

զ) անդամավճարներու 5/6ին 15%ը, կամ ուրիշ համեմատական սակ մը՝ որ կրնայ բացառաբար որոշուիլ կեդր. Վարչ. Ժողովին կողմէ :

ՅՈՒՈՒԱԾ 10

### ԸՆԿԵՐԱԿՑՈԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒՆԵՐԸ

#### ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ընկերակցութիւնը երեք տեսակ դրամագլուխ ունի՝ Հիմնական Դրամագլուխ, Մասնաւոր Դրամագլուխ եւ Սովորական դրամագլուխ :

Դրամագլուխները կամ Պահեստները կազմող գումարներու վերածումը, կեդր. Վարչ. Ժողովին որոշմամբ, պէտք է ըլլան հան-

րային եւ պետական արժեթուղթերու, պարտաթուղթերու եւ ուրիշ առաջնակարգ արժեթուղթերու, կամ, վերջապէս, հասութաբեր կալուածներու :

Այս դոյջերը եւ արժեթուղթերը, որ ստացուած են եւ վերեւնախատեսուած զասակարգերուն չեն պատկանիր, կրնան նոյնութեամբ պահուել :

#### Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒԽ

##### Հիմնական Դրամագլուխը կը բաղկանայ՝

ա) մուտք տուրքերէ .

բ) այս նուիրատուութիւններէն եւ կտակներէն՝ որ նուիրատուններուն եւ կտակարաններուն բացորուց կամ Փին համաձայն այս Դրամագլուխին վրայ պէտք է որ բարդութիւն .

գ) առանց մասնաւոր յատկացումի եղած այս նուիրատուութիւնները եւ կտակները զոր կեդր. Վարչ. Ժողովը կը բարդէ այս Դրամագլուխին վրայ :

Կազմուած է Հիմնական դրամագլուխի պահեստի հիմնադրամ մը, Հիմնական Դրամագլուխը կազմող արժեթուղթերուն եւ անշարժ կալուածներու արժէքի նուազումէն առաջ գալիք վնասը փխարինելու համար :

##### ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԳԼՐԱՄԲ ԿԸ ԳՐՅԱՆԱՅ՝

ա) անդամավճարներու 1/6ով .

բ) Հիմնական Դրամագլուխի զուտ եկամուտին 10%ով :

Այս բարդումները պիտի դադրին երբ Պահեստի Հիմնագլրամը հաւասարի Հիմնական Դրամագլուխին մէկ հինգերորդին արժէքին, բայց պիտի վերսկսի ամէն անգամ որ սոյն արժէքը մէկ հինգերորդին վար իջնէ :

Հիմնական Դրամագլուխը անձեռնմխելի է : Այս պայմանը հիմնական է :

#### Բ. ՄԱՍՆԱԿԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒԽ

##### ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒԽ մաս կը կազմեն՝

ա) Մասնաւոր յատկացումներով նուիրատուութեանց եւ կտակներու գումարը կամ արժէքը՝ ծախքերը ղեղչուել վերջ .

բ) մասնաւոր հիմնագլրամները, առժամեայ կամ մշտական,

զոր կեդր. Վարչ. Ժողովը ստեղծած է՝ առանց մասնաւոր յատկացումի Նուիրատուութեանց եւ կտակներու գումար-ներով:

Նուիրատուութեանց, կտակներու եւ Հիմնադրամներու պատկանող արժեքուղիքներուն եւ կալուածներուն արժէքին պատահական անկումէն առաջ գալիք վնասը փոխարինելու համար, մէն մի կտակ, ինչպէս նաեւ կեդր. Վարչ. Ժողովին ստեղծած մէն մի Հիմնադրամը, պիտի ունենայ Պահեստ մը, որ պիտի կազմուի այդ Նուիրատուութեանց, կտակներուն եւ Հիմնադրամներուն զուտ եկամուտին 10%ով, եթէ նուիրատուները, կտակարարները կամ կեդր. Վարչ. Ժողովը հակառակ պայման չեն դրած:

Եթէ նուիրատուներուն եւ կտակարարներուն կամ կեդր. Վարչական Ժողովին կողմէ հակառակ պայման չէ դրուած, Հիմնադրամներու եւ կեդր. Վարչական Ժողովին ստեղծած Մասնաւոր Հիմնադրամներուն եկամուտներուն 10%ը վար պիտի դրուի վարչական ծախսաբաժին անուան տակ եւ պիտի յատկացուի Ընկերակցութեան ընդհանուր ծախքերուն:

Հիմնական Դրամագլուխի Պահեստին համար նախատեսուած բարդումներուն դադարման կամ վերսկման վերաբերեալ տրամադրութիւնները կը կիրարկուին նաեւ Մասնաւոր Դրամագլուխի Պահեստին, եթէ նուիրատուները կամ կտակարարները կամ կեդր. Վարչ. Ժողովը հակառակ պայման չեն դրած:

#### Գ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

Ընկերակցութեան Սովորական Դրամագլուխին մաս կը կազմեն՝  
ա) այն Հիմնադրամները որ չեն մտներ Հիմնական Դրամագլուխին կամ Մասնաւոր Դրամագլուխին մէջ.

բ) առանց մասնաւոր յատկացման եղած այն Նուիրատուութիւններու եւ կտակներու գումարները զոր կեդր. Վարչ. Ժողովը կ'որոշէ Սովորական Դրամագլուխին վրայ բարդել:

գ) պարտադիր նուիրատուութիւնները եւ կտակները:

կեդր. Վարչ. Ժողովը կրնայ Սովորական Դրամագլուխին համար Պահեստի Հիմնադրամ մը ստեղծել ու անոր պայմանները ճշդորոշել:

#### ՅՈՒԹՈՒԱՆ 11

#### ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԳԻՐՆԵՐՈՒ

Ա. Միութեան Տնօրէնութեան Դիւանէն տրուած ուէս ստացագիր

պէտք է որ կը երկու ստորագրութիւն, Գանձապահին եւ Վարիչ-Պատուիրակին, եւ, ի բացակայութեան, անոնց փոխանորդներուն ստորագրութիւնները:

Շրջանակներու կեդրոնական Յանձնաժողովներէն եւ տեղական Մասնաժողովներէն տրուած ուեւէ ստացագրի պէտք է որ նոյնպէս կը կրկին ստորագրութիւն, սոյն Յանձնաժողովներուն եւ Մասնաժողովներուն Ատենապետին եւ Գանձապահին եւ կամ անոնց փոխանորդներուն ստորագրութիւնները:

Բ. Պահապահութիւնները եւ հաղորդագրութիւնները պէտք է որ ուղղուին Տնօրէնութեան Դիւանին (տես Յօդուած 13), իսկ Շրջանակային Յանձնաժողովներու եւ Տեղական Մասնաժողովներու թշրիւակցութիւնները՝ անոնց Ատենապետներուն:

#### ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

##### ՅՈՒԹՈՒԱՆ 12

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ՀԱՏՏՈՒԹԻՒՆ, ՆՈՐՈԳՈՒՄ  
ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԵՐՈՒ ՃԵՏ

Ա. Կեդր. Վարչ. Ժողովը կը բաղկանայ առնուազն ինը եւ առանաւելն առանեւէինդ անդամներէ: Առաջին կեդր. Ժողովը կազմըւած է հետեւեալ կերպով:

Տ. ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ,	Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ,
Տ. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,	Տ. ՄԻՔԱՅԻԼ ՊԱՊԱԶԱՆԵԱՆ,
Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՈՆ ՊէՅ,	Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,
Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼՔԵԿԵԱՆ,	Տ. ԱՐԱՄ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ,
Տ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ,	Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՆԿԵՐՏԱՆ,
Տ. ՍԵՐՈՎԻՔ ՍՎԱՃԵԱՆ,	Տ. ԶԱՐԵԶ ՊէՅ ՆՈՒՊԱՐ:

Կեդր. Վարչ. Ժողովին անդամներուն պաշտօնը անվճար է:

Բաց աստի, կեդր. Վարչ. Ժողովին մէջ, Ամերիկայի եւ Եգիպտոսի Շրջանակներուն կեդր. Յանձնաժողովներու իւրաքանչիւրը կ'ու-

նենայ մնայուն ալթու մը , զոր կրնայ դրաւել անձնապէս Յանձնաժողովին Ատենապետը , Փոխ-Ատենապետներէն մին կամ Գանձապահէն :

Սոյն երկու Յանձնաժողովներու միւս անդամները իրաւունք ունին անձամբ ներկայ գտնուելու կեղը . Վարչ . Ժողովի նիստերուն , խորհրդակցական ձայնով :

Բ . Կեդր . Վարչ . Ժողովի նորոգումը տեղի կ'ունենայ երեք տարին անդամ մը , մասնակի կերպով , յատենի Ընդհանուր Ժողովի , եւ այնպիսի եղանակով մը որ ամբողջական նորոգումը ինը տարուն մէջ լրանայ :

Անդամներու դադարման սոյն կարգը առաջին շրջանին համար վիճակաւ կ'որոշուի , եւ յետոյ հնութեան կարգաւ կը շարունակուի :

Դադարեալ անդամները վերընտրելի են միշտ :

Առնուագն 5 Զուկցերիական Փրանք կամ համարժէք ամսավճար հատուցանող անդամները միայն կրնան կերպոնական Վարչական Ժողովին անդամակցիլ :

Գ . Երբ Կեդր . Վարչ . Ժողովի անդամներուն թիւը 15էն պակս է , Ժողովը կրնայ առժամապէս նոր անդամներ ընտրել , պայմանաւ որ որոշեալ թիւը չանցնի :

Ընդհանուր Ժողովը , սոյն ընտրութեանց յաջորդող առաջին գումարմանը մէջ , անոնք կը վաւերացնէ եւ կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնականապէս :

Դ . Ուեւէ պատճառով պակսած անդամի մը տեղ ընտրուսդ անդամ մը կը պաշտօնավարէ մինչեւ այս ատեն՝ ուր պիտի լրանար իր փոխանակեալին պաշտօնը :

Այս պարագային երբ Ժողովին անդամներուն թիւը Յօդուած 12ով նախատեսուած 15 թիւէն պակաս ըլլալով՝ նոր անդամի մը ընտրութիւն կատարուի , այս վերջնոյն պաշտօնավարութիւնը կը լրանայ ընթացիկ եռամեայ շրջանին վերջը :

Ատենագրութիւնները կը ստորագրուին նիստին ատենապետող անդամին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի մը կողմէ :

Ատենագրութիւններէն ի հարկին տրուելիք ընդօրինակութիւնները կամ քաղուածքները՝ Կեդր . Վարչ . Ժողովին Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պիտի ստորագրուած ըլլան :

Ե . Ընկերակցութիւնը երրորդներու հանդէպ ըստ օրինի պարտաւուած եւ ներկայացուած կ'ըլլայ երբ միասին կը ստորագրեն հետեւեալ երեք անձերը — Ժողովին Ատենապետը կամ Փոխ-Ատենապետներէն մին , Գանձապահը եւ Վարիչ-Պատուիրակը :

Սակայն եւ այնպէս , ուեւէ չէք , դրամական փոխանցուաի կամ դանձումի կամ արժեթուղթերու վաճառման ուեւէ հրաման , պայմանաւ որ քառասուն հազար Զուկցերիական Փրանքի գումար մը կամ արժէք մը չանցնի , կրնայ վաւերականօրէն ստորագրուիլ հաւաքարար Գանձապահէին եւ Վարիչ-Պատուիրակին կամ իրենց փոխանորդներուն կողմէ :

Ամէն յանձնառագիր եւ պայմանագրութիւն կրնայ նաև վաւերականօրէն ստորագրուիլ կեդրոնական Վարչական Ժողովին յատկապէս նշանակուած մէկ կամ աւելի պատուիրակներու կամ փոխանորդներու կողմէ : Այդ պարագային , Ժողովին ատենագրութեան վաւերացեալ պատճէնը պէտք է որ վերըգրեալ յանձնառագրիրներուն կամ պայմանագրութեանց կցուի կամ շահագրգուուղ կողմէրուն հաղորդուիլ :

### ՅՈՒՌԱՅ 13

#### ԴԻԽԱՆԻ ԿԱԶՄՈՒԻԹԻՒՆ

Կեդր . Վարչ . Ժողովը երեք տարուան համար իր անդամներուն մէջն կ'ընտրէ Ատենապետ մը , երեք Փոխ-Ատենապետներ եւ Գանձապահէ մը :

Լուծեալ Հ . Բ . Բ . Միութեան Կեդրոնական Ժողովին Ատենապետը Վսեմ . Պողոս Նուպար Փաշա ներկայ Ընկերակցութեան կեդր . Վարչ . Ժողովին ցկեանս Ատենապետը պիտի ըլլայ :

Ժողովը կը ստեղծէ եւ կը կազմակերպէ Միութեան վարչական եւ ելեւմտական ճիւղերուն համար Տնօրէնութիւն մը — Տնօրէնութեան Դիւան — անոր գլուխը գնելով Վարիչ-Պատուիրակ մը՝ Կեդր . Վարչ . Ժողովին անդամներուն մէջէն կամ դուրսէն ընտրուած : Վարիչ-Պատուիրակը , ինչպէս եւ Տնօրէնութեան Դիւանի պաշտօնեաները վճարեալ են :

Վարիչ-Պատուիրակը կը վարէ նաև Միութեան Ընդհ . Քարտուղարի պաշտօնը :

Կեդր . Վարչ . Ժողովը իր իրաւասութեանց մէկ մասը կը յանձնէ վարչական եւ ելեւմտական ճիւղերու Տնօրէնութեան , նոյն Տնօրէնութեան ներքին Կանոնագրին նախատեսած սահմաններուն մէջ :

ՅՈՒԹԱԾ 14

ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԵՒ ԽՈՐՀՐԴԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Կեդր. Վարչ. Ժողովը կը գումարուի ամէն անդամ որ Միութեան շահերը կը պահանջեն: Գումարումները տեղի կ'ունենան Ատենապետին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ-Ատենապետներէն մէկուն եւ կամ Վարիչ-Պատուիրակին հրաւիրով:

Բ. Ժողովը կը գումարուի երբ առ նուազն երեք անդամներ պահանջեն:

Բացակայ վարիչ անդամները կրնան իրենց ձայնը տալ ժողովին մէկ ուրիշ անդամին:

Գ. Որպէսզի որեւէ գումարման մէջ արոշումները օրինական համարուին, պէտք է որ ժողովին անդամներուն իսկական թիւին գոնէ կէսը ներկայ կամ ներկայացուած ըլլայ: Առնուազն երեք անդամներու անձամբ ներկայութիւնը անհրաժեշտ է. միւս անդամները կրնան ձայներնին իրենց պաշտօնակիցներուն տալ: Ոչ մէկ ատեն սակայն անդամ մը իր ձայնէն զատ մէկէ աւելի ձայնի իրաւունք կրնայ ունենալ:

Կեդրոնական Վարչական Ժողովի որոշումները ներկայ կամ ներկայացուած անդամներու ձայներուն մեծամասնութեամբը կը տրուին: Զայներու հաւասար բաժանման պարագային Ատենապետին ձայնը գերակշիռ է:

Ընտրութիւններու ատեն անհրաժեշտ է ունենալ ժողովը կազմող անդամներուն երկու երրորդի մեծամասնութիւնը:

ՅՈՒԹԱԾ 15

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ա. Կեդր. Վարչ. Ժողովը Միութեան վարչութեան եւ գործառնութեանց մասին ամենալայն իրաւասութիւն եւ հեղինակութիւն ունի:

Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն ունի՝

Կատարելու Ընկերակցութեան Յօդուած 1ով սահմանուած նը-պատակներուն իրագործման ծառայող ամէն գործ:

Օգնութիւն եւ պաշտպանութիւն ընծայելու ամէն Հայու, առանց դաւանանքի խտրութեան, հայտղգի դիւղացիներուն նպաստելու, ա-

նոնց հայթայթելով սերմնցու, կենդանի, երկրագործական գործիք եւ մշակելի հողեր:

Սովէ, հզդէհէ կամ ուրիշ ուեւէ աղէտէ եւ համաճարակէ արկած-եալ վայրերու բնակիչներուն օգնութեան հասնելու եւ ընդհանրապէս սատարելու ժողովուրդին առողջապահական պայմաններուն բարե-լաւման:

Գիւղելու մէջ մշակութեան մասին այժմու գործնական գիտե-լիքները տարածելու, տեղական արհեստագործութեանց զարդացու-մին նպաստելու, երկրին պայմաններուն համապատասխան եղանա-կով աշխատութեան եւ արդինաբերութեան նոր միջոցներ ստեղ-ձելու:

Հիմնելու կամ նպաստով օժանելու վարժարաններ, մատենագա-րաններ, ընթերցատուններ, արհեստանոցներ, հիւանդանոցներ, դար-մանատուններ, որբանոցներ եւ ուրիշ նմանօրինակ հաստատութիւն-ներ:

Ընդունելու կամ մերժելու ո եւ է նուիրատուութիւն կամ կտակ:

Ո եւ է գումար գանձելու եւ վճարումներ կամ ծախքեր ընելու, շարժուն եւ անշարժ ո եւ է ստացուածքի տիրանալու, ո եւ է ար-ժեթուղթ կամ աւանդ յանձնելու կամ վերստանալու:

Ընկերակցութեան շահուն կամ օգուտին համար ո եւ է շար-ժուն ու անշարժ կալուած ստանալու կամ ձեռքէ հանելու, ո եւ է փոխանորդագիր յանձնելու կամ ո եւ է փոխհրիտակ (fidéicomis) հաստատելու, իրենց պահելով վարչական բոլոր իրաւունքները՝ այդ կերպով մատակարարուած գոյքերը եւ ստացուածքները ետ առ-նելու կամ ուրիշներու փոխանցելու, ինչպէս նաեւ յիշեալ փոխա-նորդութեանց եւ փոխհրիտակներուն վերջ տալու:

Ընկերակցութեան անձեռնմխելի հիմնաբարձներուն եւ դրամա-գլուխներուն համար ո եւ է բնկանելի կամ անբեկանելի թրըթ կազմելու, պայմանաւ որ այդ հիմնաբարձներուն եւ դրամագլուխ-ներուն եկամուտները յանձնանձուին եւ մատակարարուին Ընկերակ-ցութեան կողմէ, Հիմնական կանոնագրին եւ նուիրատուութեան պայմանագիրներուն տրամադրութեանց համաձայն:

Իրաւասութիւններու վերոյիշեալ թուումը բացատրիչ է եւ ոչ սահմանիչ. մէկ խօսքով՝ Կեդր. Վարչ. Ժողովը ունի բոլոր այն իրաւունքները որ յատկապէս Ընդհանութիւն վերապահուած չեն:

Կեդր. Վարչ. Ժողովը կարող է իր իրաւասութեանց ամբողջու-

թիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներէն երկուքէն կամ երեքէն բաղկացած մէկ կամ աւելի Յանձնախումբերու:

Բ.—Կեդր. Վարչ. Ժողովը առաջնակարգ դրամատուներու մէջ պիտի պահէ Միութեան բոլոր արժեթուղթերը, ինչպէս նաեւ տրամադրելի գումարները:

Գ.—Կեդր. Վարչ. Ժողովը կը պատրաստէ Ընկերակցութեան տարեկան հաշուեկիւր եւ Ընդհանուր Ժողովին կը մատուցանէ՝ իր պաշանավարութեան տեղեկագրին հետ:

Կեդր. Վարչ. Ժողովի ո եւ է անդամ կրնայ Շրջանակային Յանձնախումբներու եւ Շրջանակային Համաժողովներու նիստերուն ներկայ գտնուիլ՝ առանց քուէի իրաւունքի:

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԵՐ

ՅՈՒՂՈՒԱՆ 16

### ՇՐՋԱՆԱԿԻՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Այժմէն իսկ ստեղծուած են երկու շրջանակային բաժանումներ՝ 1.—Ամերիկայի Միացեալ Նահանգներ, 2.—Եղիպատու՝ որուն մաս կը կազմեն Սուրբա, Պաղեստին, Եթովպիա, Հնդկաստան եւ Յունաստան:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ փոփոխութեան ենթարկել ո եւ է շրջանակային բաժանումներու սահմանները, ինչպէս կրնայ ուրիշ շրջանակներ ստեղծել նաեւ այն ամէն տեղերը ուր անդամներուն եւ Տեղական Մասնաճիւղերուն թիւը օգտակար կ'ընծայէ այդ բանը, աշխարհագրական պայմաններն ալ նկատի առնելով:

Այս շրջանակները կազմուելէ վերջ չեն կրնար չնջուիլ կամ անոնց սահմանները չեն կրնար փոխուիլ առանց Ընդհանուր Ժողովի որոշման:

ՅՈՒՂՈՒԱՆ 17

Իւրաքանչիւր Շրջանակ կը յանձնանձուի «Շրջանակին Կեդրոնական Յանձնախողովի» մը կողմէ, ինչպէս ստորեւ բացատրուած է:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանակին առաջին Կեդրոնական Յանձնախողովը պիտի կազմուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանակային Յանձնախողովի արդի անդամներէն:

Եղիպատուի Շրջանակին առաջին Կեդրոնական Յանձնախողովը

պիտի կազմուի Եղիպատուի Շրջանակային Յանձնախողովին արդի անդամներէն:

Իւրաքանչիւր Շրջանակի Կեդրոնական Յանձնախողովը կը նայ Շրջանակին Յանձնախողովներ կազմել իր շրջանակին մէկ մասին մէջ, Կեդրոնական Վարչական Ժողովին հաւանութեամբը:

Կեդր. Վարչ. Ժողովը իր ուղղակի վարչութեան տակ պիտի ունենայ Եւրոպայի Տեղական Մասնաճիւղերը, ինչպէս եւ ուրիշ երկիրներու մէջ գտնուող բոլոր այն Մասնաճիւղերը որոնց անդամներուն թիւը այժմ բաւական չէ այդ տեղերուն մէջ Շրջանակներ ստեղծելու համար:

ՅՈՒՂՈՒԱՆ 18

Շրջանակներու Կեդր. Յանձնախողովները կը բաղկանան առնուազն 7 եւ առաւելն 11 անդամներէ: Ամէն երկու տարին անդամ մը անոնք կը վերանորոգուին կիսովին: Իրենց անդամներուն մէջէն անոնք կ'ընտրեն Ատենապետ մը, մէկ կամ երկու Փոխ-Ատենապետներ, Ատենապայիր մը եւ Գանձապահ մը: Այս անուանումները պէտք է հաստատուին Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ:

Շրջանակներու Կեդր. Յանձնախողովները իրենց մօտ կը կեղրունացնեն իրենց Շրջանակին Մասնաճիւղերուն բոլոր թղթակցութիւնները, ինչպէս եւ հաշուակալութեան եւ գանձապահութեան վերաբերեալ բոլոր գործառնութիւնները: Ուղղակի պատասխանատու են Կեդր. Վարչ. Ժողովին:

Անոնք պարտին ամէն տարի Կեդր. Վարչ. Ժողովին ներկայացնել մանրամասն տեղեկագրի մը՝ Միութեան իրենց Շրջանակին մէջ ունեցած գործունէութեան մասին, անոր կցելով իրենց եւ իրենց Մասնաճիւղերուն հասոյթներու եւ ծախքերու վիճակացոյցները, ինչպէս նաեւ Համաժողովներու եւ Շրջանակին Կեդրոնական Յանձնախողովին եւ Մասնաճիւղերուն ընտրութեանց եւ անուանումներու:

Շրջանակներու Կեդր. Յանձնախողովները պարտաւոր են առաւել վեց ամիսը անդամ մը Կեդր. Վարչ. Ժողովին եւ կամ 21րդ Յօդուածի տրամադրութեան համաձայն անոր կողմէ կարգուած ել մտական ներկայացուցիչն յանձնել բոլոր հասոյթները, պիտածէով նախատեսուած ծախքերը գեղչելէ վերջ:



Ամէն տարի Շրջանակային Համաժողով մը կը գումարուի, նա-  
խորդ տարուան Համաժողովին կողմէ նշանակուած քաղաքի մը մէջ:  
Առաջին Համաժողովին գումարուելիք քաղաքը կը նշանակուի կեդր.  
Վարչական ժողովին կողմէ:

Շրջանակային Համաժողովը կը բաղկանայ շրջանին բոլոր Մաս-  
նաժողովներուն կողմէ ընտրուած պատուիրակներէ: Իւրաքանչիւր  
Մասնաժողով կ'ընտրէ այնքան պատուիրակ որքան անգամ 50 ան-  
դամ ունի իր Մասնաճիւղը, պայմանաւ որ իր պատուիրակներուն թի-  
ւը հինգը չանցնի:

Շրջանակային Համաժողովը կ'ընտրէ իր Ատենապետը եւ իր Դի-  
ւանը: Որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ:  
Ձայներու բաժանման պարագային՝ Ատենապետին ձայնը գերազիւ-  
է: Ան կ'ընտրէ նաեւ Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին ան-  
դամները: Բացառաբար, Եղիպտոսի Շրջանակին կեդրոնական Յանձ-  
նաժողովին անդամները կ'անուանուին, ինչպէս այժմ, կեդր. Վարչ.  
Ժողովին կողմէ:

Կը լոէ Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին տեղեկադիրը,  
կը խորհրդակցի այն խնդիրներուն մասին որ կեդր. Վարչ. Ժողովին  
կողմէ իրեն կը յանձնուին եւ անոր կ'ենթարկէ այն ամէն առաջարկ-  
ները որ կը սատարեն Հ. Բ. Բ. Միութեան բարգաւաճման՝ իր Շրջա-  
նակին մէջ:

Շրջանակային Համաժողովը իր շրջանակին համար պիտոնէի  
ծրագիր մը կը պատրաստէ եւ կը դրէս կեդր. Վարչ. Ժողովին՝  
ընդհանուր պիտոնէի ծրագրին մէջ մացնելու համար:

Նոր ստեղծուած Շրջանակի մը առաջին Յանձնաժողովը կ'ընտ-  
րուի կեդր. Վարչ. Ժողովի կողմէ:

Շրջանակներու կեդրոնական Յանձնաժողովներու անդամները  
վերընտրելի են:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ նշանակել Շրջանակներու կեդր.  
Յանձնաժողովներուն մօտ ելմտական պատուիրակ մը՝ որ պաշտօն պի-  
տի ունենայ տեղեակ պահելու ինքը Միութեան իր Շրջանակին մէջ

ունեցած գործունէութեան վերաբերեալ ամէն տեսակ ելմտական  
խնդիրներու մասին եւ ստանալու Շրջանակին կեդրոնական Յանձնա-  
ժողովին մօտ գտնուած գումարները՝ անոնք յանձնելու համար  
Միութեան կեդր. մատուկին:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ անուանել նաեւ մասնաւոր պատ-  
ուիրակ մը որուն պաշտօնը պիտի ըլլայ աշխատակցիլ Շրջանակներու  
կեդրոնական Յանձնաժողովներուն հետ, Միութեան բրոբականտի  
դործին համար:

Այս երկու պատուիրակները իրաւունք չունին միջամտելու Շրջ-  
անակներու կեդրոնական Յանձնաժողովներուն վարչական ինդիրնե-  
րուն:

Շրջանակի մը կեդր. Յանձնաժողովի անդամի եւ ելեմտական  
պատուիրակի պաշտօններուն մէջ անհաշտութիւն չկայ:

Շրջանակային Համաժողովը կը մշակէ ներքին կանոնադիր մը  
սահմանելու համար Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին եւ  
Մասնաժողովներու պաշտօնավարութեանց իրաւասութիւնները: Այս  
ներքին կանոնագիրը, որ պէտք չէ պարունակէ ներկայ կանոնագրին  
հակառակ ո եւ է տրամադրութիւն, դործադրութեան կը գրուի՝ Մի-  
ութեան կեդր. Վարչ. Ժողովին կողմէ վաւերացուելէ յետոյ:

## ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱՑԻՒՂԵՐ

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԸ  
ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՄԸ

Ա. — Մասնաժիւղեր կրնան կազմակերպուիլ կեդր. Վարչ. Ժո-  
ղովին կամ պատկան Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին ո-  
րոշմամբ ամէն ուր որ Միութիւնը ունի գէթ տասը անդամ:

Կեդր. Վարչ. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իւրաքանչիւր  
Մասնաժիւղի գործունէութեան շրջանակը: Ան ո եւ է ատեն կրնայ  
ընդպարձակել կամ անձկացնել այդ շրջանակը:

Բ. — Տեղական Մասնաժողովները կ'ընտրուին այդ շրջանակին  
ամսական առնուազն 2 Զուրցերիական Փրանքի համարէէք գումար մը

գծարող անդամներէն բաղկացած ժողովէ մը : Այդ ժողովին մէջ իւրաքանչիւր անդամ այնչափ ձայն ունի որչափ Զուիցերիական 2 ֆըրանքի համարժէք գումար մը կը ներկայացնէ իր վճարած ամսաբաժինը : Եթէ ներկայ անդամներու մէջ ձայներու բացարձակ մեծամասնութիւն չի գոյանայ, երկրորդ գումարի գումար մը կը կատարուի եւ այդ պարագային՝ համեմատական մեծամասնութիւնը բաւական կը նկատուի :

Այն պարագային որ, ո եւ իցէ պատճառաւ մը, վերեւ յիշատակուած ժողովը կարելի չըլլայ գումարել, կեդր. Վարչ. ժողովը կամ պատկան Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովը կրնայ ընտրել Մասնաժողով մը՝ որ պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ որ կանոնաւոր ընտրութիւններ կարելի ըլլայ կատարել :

Բացառաբար, կեդր. Վարչ. ժողովին եւ Եղիպառոսի Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին կեդրոնատեղիներուն մէջ, Տեղական Մասնաժողովները կ'ընտրուին ամէն տարի կեդր. ժողովին եւ կամ Յանձնաժողովին կողմէ, որոնց կուտան ուղղակի իրենց պաշտօնավարութեան համարը :

Կեդր. Վարչ. ժողովը կրնայ սակայն որոշել որ այս Մասնաժողովները ընտրութեամբ անուանուին :

Տեղական Մասնաժողովներու անդամներուն պաշտօնը անվճար է :

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԴԻՒԱՆՆԵՐԸ

Իւրաքանչիւր Մասնաժողով իր անդամներուն մէջէն ամէն տարի կ'ընտրէ Ատենապետ մը, Ատենապիր մը եւ Գանձապահ մը :

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կեդր. Վարչ. ժողովին խորհրդակցութեանց համար 14րդ Յօդուածին մէջ հաստատուած կանոնները նմանապէս գործադրելի են Մասնաժողովներու խորհրդակցութեանց համար :

Մասնաժողովներու ատենագրութիւնները՝ նիստին ատենապետող անդամին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի մը կողմէ կը ստորագրուին : Ատենապրութիւններէ հանուելիք ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ ժողովին Ատենապետին կողմէ պէտք է ստորագրուած ըլլան :

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԸ

Մասնաժողովները, իրենց չընանակին սահմաններուն մէջ, Միութեան նոր անդամ կը դանեն, կը ջանան անոնց թիւը աւելցնել, իրենց տրամադրուած ամէն միջոցներով անոր ծաւալմանը կ'աշխատին, կը գանձեն մուտքի տուրքերը, անդամակները, և նուիրատը ւութեանց գոյացումին ջանադիր կ'ըլլան : Ամէն անդամ որ նոր անդամադրութիւններ եւ նուիրատուութիւններ կ'ըլլան՝ նորընտիր անդամներու եւ նուիրատուններու անունները եւ հասցէնները պարտին ծանուցանել իրենց պատկանած Շրջանակին կեդր. Յանձնաժողովին, որ անոնք կը հրատարակէ : Մուտքի տուրքերը, ամսավճարները, ինչպէս նաեւ Զուիցերիական 1000 Փրանքէն նուազ եղող նուէրները կը դանձուին Մասնաժողովին Ատենապետին եւ Գանձապահին, իսկ անոնց բացակայութեանը՝ անոնց պաշտօնը առժամարար վարելու համար Մասնաժողովին կողմէ անուանուած երկու անդամներուն և ստորագրութիւնը կողմէ ընկալագիրներու եւ անդորրադիրներու փոխարէն : Իսկ 1000 Զուիցերիական Փրանքէ աւելի նուիրատուութիւնները պէտք է ուղղուին կեդր. Վարչ. ժողովին կամ Շրջանակներու կեդրոնական Յանձնաժողովներուն Գանձապահներուն, նշանակելով աղբիւր եւ յարակից մանրամասնութիւնները :

Մասնաժողովները իրենց չընանակին մէջ, կրնան՝ իրենց հսկողութեան եւ պատախանատուութեան տակ՝ կազմել Օժանդակ Մասնաժողովներ, նաեւ մասնաւոր եւ առժամանակեայ Յանձնախումբներ, անոնց փոխանցերով իրենց յատուկ իրաւասութիւնները՝ մասսամբ կամ ամբողջովին :

Կարող են առաջարկներ ներկայացնել կեդր. Վարչ. ժողովին կամ իրենց պատկանած Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին, եւ անոնց անդամները կրնան ներկայ գտնուել յիշեալ ժողովներու նիստերուն՝ սակայն առանց քուէի իրաւունքի :

Մասնաժողովները պարտաւոր են կամունաւոր տոմարակալութիւն մը ունենալ եւ գոյացած դրամները դրկել իրենց պատկանած Շրջանակին կեդրոնական Յանձնաժողովին Գանձապահին :

Իրենց ընդհանուր ծախքներուն համար կրնան գործածել միայն անդամակներուն 5/6 ին 15%ը . այս սակէն աւելի ամէն ծախք պէտք է նախապէս արտօնուի կեդր. Վարչ. ժողովին կողմէ, նախահաջիւր սահմաններուն մէջ :

Դ. Իւրաքանչիւր վեցամսեայի վերջը, պարտաւոր են իրենց պատկանած Շրջանակին կեղը. Յանձնաժողովին զրկել իրենց հաշիւները՝ անոնց կցելով իրենց շրջանակին վերաբերեալ խնդիրներու մասին տեղեկադիր մը:

Դ. Պարտաւոր են ամենայն ճշգութեամբ համակերպիլ կեղը. Վարչ. Ժողովին եւ պատկան Շրջանակի կեղը. Յանձնաժողովին որոշումներուն: Յիշեալ Ժողովները իրաւունք ունին Մասնաժողովներու անդամները հրաժարեցնելու՝ երբ անոնք պարտավանց գտնուին, եւ անոնց տեղ առժամաբար յաջորդներ կարգելու, մինչեւ որ վերոգրեալ 23րդ Յօդուածին մէջ նշանակուած եղանակաւ վերջնական ընտրութիւն կատարուի:

## ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՈՒՌԱԾ 27

Ա. Ընդհանուր Ժողովը Միութեան անդամներուն ընդհանրութիւնը կը ներկայացնէ եւ անոր բոլոր գործառնութեանց վերին հետիւնը կամ ներկայութիւնը ունի: Իր որոշումները պարտաւորիչ են ամէնուն, նոյն իսկ բացականերուն եւ տարակարծիքներուն համար:

Բ. Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունին անոնք միայն, որ առնուազն մէկ տարիի ի վեր Միութեան անդամակցած եւ ամսական նուազագոյն 5 Զուիցերիական Փրանքի համարժէք անդամակցար հատուցած են կանոնաւորապէս:

Իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի այնչափ ձայնի որչափ անդամ իր ամսական կը պարունակէ Զուիցերիական 5 Փրանքի համարժէք գումարը:

Ի պաշտօնէ Ընդհանուր Ժողովին կը մասնակցին Շրջանակներու կեղը ունական Յանձնաժողովներու, Շրջանային Յանձնաժողովներու եւ Տեղական Մասնաժողովներու անդամները, ինչպէս նաև Բարերար եւ Պատուոյ Անդամները՝ որոնց մասին խօսուած է 7րդ Յօդուածին մէջ: Բացի այն ձայներէն զոր կրնան ունենալ իբրեւ բաժնեկցար անդամ, Բարերար Անդամներէն իւրաքանչիւրը 10 ձայնի, իսկ Պատուոյ Անդամներէն իւրաքանչիւրը 4 ձայնի իրաւունք ունի:

Շրջանակի մը իւրաքանչիւր կեղը ունական Յանձնաժողովը կը ընդհանուր Ժողովին մօտ ներկայացուցիչ մը ունենալ, յանձին պատ-

գամաւորի մը զոր կը նշանակէ այդ Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող անդամներուն մէջէն, որ սակայն, իր ունեցած ձայնն աւ հաշուելով, 20 ձայնէ աւելի չի կրնար ունենալ:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունքը ունեցող որ եւ է անդամ կրնայ իր տեղը ներկայացուցիչ կարգել այդ իրաւունքը ունեցող ուրիշ ո եւ է անդամ մը:

Ներկայացուցիչը իր ձայներէն զատ կ'ունենայ իր փոխանորդեալին ձայներն ալ:

Փոխանորդագիրներու ստորագրութիւնը պարտի վաւերացուածը կամ օրինական ձեւակերպութեամբ, կամ կեղը. Վարչ. Ժողովին կամ Շրջանակներու կեղը. Յանձնաժողովներուն եւ կամ Տեղական Մասնաժողովներուն Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ:

Գ. Ընդհանուր Ժողովը կը գումարուի Լօգան կամ այլուր, ըստ կեղը. Վարչ. Ժողովին որոշման, օրակարգի խնդիրներուն ամփոփումը պարունակող հրաւիրագիրով մը, որ կը հրատարակուի գումարման համար որոշուած օրէն երեք ամիս առաջ, իսկ ստիպողական պարագայի մէջ՝ առնուազն երեսուն օր առաջ:

Դ. Անոր կը նախագահէ կեղը. Վարչ. Ժողովին Ատենապետը, իսկ իր բացակայութեան՝ Փոխ-Ատենապետներէն մին կամ Ատենապետի պաշտօնը կատարող վարիչ անդամը:

Ատենապետը կ'անուանէ Ատենապետը:

Ե. Կեղը. Վարչ. Ժողովին կողմէն պատրաստուած օրակարգին մէջ նշանակուած խնդիրներէն զատ՝ ուրիշ նիւթերու վրայ կարելի չէ խորհրդակցիլ:

Ընդհանուր Ժողովին ատենապետիւնները կը ստորագրութիւնների անդամներէն: Ատենապետիւններէն հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածքները՝ կեղը. Վարչ. Ժողովի Ատենապետին եւ կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուին:

Զ. Ընդհանուր Ժողովը կը գումարուի ամէն տարի կեղը. Վարչական Ժողովին որոշած թուականին՝

Լսելու համար կեղը. Վարչ. Ժողովին տեղեկագիրը Ընկերակցութեան կացութեան մասին, եւ ընդունելու համար բոլորուած տարեցրանին հաշիւները, որ նախագէս՝ Ժողովին գումարումէն 15 օր առաջ՝ անդամներու տրամադրութեան տակ դրուած ըլլալու են Միութեան կեղը ունին մէջ:

Ներկայացուած հաշխները վաւերացնելու կամ ուղղելու համար :  
Երբ հարկ ըլլայ՝ վարիչներուն ընտրութիւնները կատարելու  
համար :

Անուանելու համար Հաշուեքնիչ մը եւ Փոխ-Հաշուեքնիչ մը,  
յաջորդ Ընդհ . Ժողովին համար տեղեկագիր մը պատրաստելու պաշ-  
տոնով , Կեդր . Վարչական ժողովին կողմէ ներկայացուած Հաշուե-  
կալուն եւ Հաշխներուն ճշդութեան եւ Հաշուագրութեանց ու փաս-  
տաթուղթերու հետ համաձայնութեան մասին :

Եւ տնօրինութիւններ ընելու համար այն ամէն խնդիրներու մա-  
սին՝ որ հրաւիրագրին մէջ նշանակուած օրակարգին մաս կը կագ-  
մէն :

Է . Վերոգրեալ խնդիրներէն զատ , Ընդհանուր Ժողովին անկ  
է կանոնագրին վրայ ըլլալիք փոփոխութիւններուն , յաւելումներուն  
կամ յապատումներուն մասին ո եւ է որոշում տալ , մասնաւորաբար՝

ա) Ընկերակցութեան նպատակը կազմող պուարկաներէն մէ-  
կուն ընդարձակումը , սեղմումը , բարեփոխումը կամ ձեւա-  
փոխումը , առանց սակայն ո եւ է պարագայի մէջ փոփոխելու  
կամ խաթարելու իր ընդհանուր նպատակը եւ իր հիմնական  
պայմանները (Յօդուած 1 եւ 10) :

բ) Ընկերակցութեան անուան ձեւափոխումը կամ այլափո-  
խումը , պայմանաւ որ այդ փոփոխութիւնը՝ ընդհանուր նը-  
պատակին կամ հիմնական հանդամանքին ո եւ է այլայլում  
կամ վնաս չի պատճառէ եւ ենթագրել իսկ չի տայ :

գ) Ընկերակցութեան ո եւ է եղանակաւ ձուլումը՝ համանման  
կամ նոյնատեսակ ուրիշ ընկերակցութեան մը հետ , եւ կամ  
վերջապէս Ընկերակցութեան կազմալուծումը :

Վերոգրեալ պարագաներուն թուումը լոկ բացատրիչ է եւ ոչ թէ  
սահմանափակող :

Հ . Վերեւ ա . թ . գ . Հատուածներով թուարկուած պարագա-  
ներուն մէջ , Ժողովին խորհրդակցութիւնները այն ատեն միայն օ-  
րինական կ'ըլլան երբ ներկայ եւ ներկայացուած անդամները՝ Ընդ-  
հանուր Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամնե-  
րուն առնուազն կէսը կը կազմեն , եւ որոշումը օրինական ըլլալու  
համար՝ պէտք է ընդունուի մեծամասնութենէ մը , որ ներկայ եւ  
ներկայացուած անդամներուն գէթ երեք քառորդը ներկայացնէ :  
Այսուհանդերձ , եթէ նիստին մէջ Ընդհանուր Ժողովին ներկայ գըտ-  
ուուելու իրաւունք ունեցող անդամներուն կէսը ներկայ կամ ներկա-

յացուած չէ , Ժողովը կրնայ վերոյիշեալ մեծամասնութեամբ առ-  
ժամանակեայ որոշում մը տալ : Այդ պարագային , նոր Ընդհանուր  
Ժողով մը կը գումարուի՝ երկու չարթուան նուազագոյն ժամանա-  
կամիջոցի մը մէջ , ընդունուած առժամեայ որոշումը պարունակող  
նոր հրաւիրագիրով մը . այդ որոշումը վերջնական կ'ըլլայ՝ եթէ նո-  
րոգ գումարման մէջ ներկայ եւ ներկայացուած անդամներուն ձայ-  
ներուն երեք քառորդին կողմէ ընդունուի , բաւական է որ Ժողովին  
ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն դոնէ մէկ քա-  
ռորդը այդ նիստին ներկայ կամ ներկայացուած ըլլայ :

Ուրիշ ո եւ է պարագայի մէջ , Ընդհ . Ժողովը՝ թէ՛ տարեկան եւ  
թէ՛ արտակարգ նիստ գումարելուն՝ վաւերական կերպով խորհր-  
դակցած կ'ըլլայ , եթէ ներկայ եւ ներկայացուած անդամներուն թի-  
ւը գոնէ մէկ հինգերորդը ըլլայ Ընդհանուր Ժողովին ներկայ գըտ-  
ուուելու իրաւունք ունեցող անդամներուն թիւին . իսկ որոշումները  
կը տրուին ձայներու մեծամասնութեամբ : Եթէ այդ օրինական  
թիւը չի գոյանայ , երկրորդ նիստ մը կը գումարուի եւ վաւերական  
կերպով կը խորհրդակցի՝ ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամներուն  
թիւը :

Ընարութեանց պարագաներուն մէջ , եթէ բացարձակ մեծամաս-  
նութիւն չի կայանայ , երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի  
եւ այն ատեն համեմատական մեծամասնութիւնը բաւարար կը նը-  
կատուի :

Թ . Կեդր . Վարչ . Ժողովը պարտաւոր է տարեկան գումարման  
օրակարգը անցընել այն առաջարկութիւնները , որ այս նպատակով  
իրեն ներկայացուած են հրաւիրագրին հրատարակումէն առաջ՝  
Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող եւ գէթ յի-  
սուն ձայնի ամբողջութիւն մը ներկայացնող առնուազն հինդ ան-  
դամներու խումբի մը կողմէ :

## ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

տատութիւնը կամ Հայկական Պետութեան մէջ այն Վարչութիւնը որ պիտի յաջորդէ Հ. Բ. Ը. Միութեան եւ շարունակէ անոր գործերուն վարչութիւնը եւ տնօրինութիւնը, համաձայն Միութեան ներկայ Կանոնագրին մէջ սահմանուած նպատակներուն, ինչպէս նաև համաձայն նուիրատուներուն եւ կտակարարներուն կամքին՝ նուիրատութեանց եւ կտակներուն վերաբերմաք:

Այն պարագային ուր լուծումը որոշելու համար ի նիստ հրաւիրուած Ընդհանուր ժողովը չի կարենայ օրինաւորապէս գումարուիլ Կանոնագրով նախատեսուած պայմաններուն համաձայն, Կեղրոնական Վարչական ժողովին նախագահը, կամ անոր տեղը բոնոյ անձը, ի նիստ պիտի հրաւիրէ հետեւեալ անձերէն բաղկացած Յանձնախումբ մը, որ Միութեան լուծման որոշումը պիտի տայ եւ պիտի նշանակէ այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հայաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը, որ պիտի յաջորդէ Միութեան:

Այս Յանձնախումբը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն. —  
ա) Միութեան Կեղրոնական Վարչական ժողովին նախագահը, Փոխ-Նախագահներէն մին, Գանձապահը եւ Վարիչ-Պատուիրակը կամ անոնց պաշտօնական տեղակաները:

բ) Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Եղիպառուի Շրջանակներու Կեղը. Յանձնաժողովներուն, ինչպէս նաև ներկայ Կանոնագրին Խթդ Յօդուածին համաձայն ստեղծուելիք Շրջանակներու Կեղրոնական Յանձնաժողովներուն կամ անոնց յաջորդած Մարմիններուն նախագահները եւ Գանձապահները, կամ անոնց պաշտօնական տեղակաները:

գ) Հայաստանի Պետութեան երեք պատուիրակները, մին՝ Հայաստանի Կառավարութեան, երկրորդը՝ Համալսարանին եւ երրորդը՝ Հայաստանի մայրաքաղաքին Քաղաքապետութեան կողմէ նշանակուած:

դ) Միութեան Կեղրոնական Վարչական ժողովին կողմէ նշանակուած հայկական բարենպատակ կամ մշակութային աշխարհական մեծ կազմակերպութեանց իրաւասու երկու ներկայացուցիչները:

է) Էջմիածնի Վեհապետ մէկ պատուիրակը:

զ) Կիլիկիոյ Վեհապետ մէկ պատուիրակը:

է) Կ. Պոլսի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքին մէկ պատուիրակը:

ը) Երուսաղէմի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքին մէկ պատուիրակը:

թ) Հայ Կաթողիկէ Գերերջ. Ս. Կաթ. — Պատրիարքին մէկ պատուիրակը:

ժ) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայ Բողոքական Եկեղիցիներուն մէկ պատուիրակը:

եթէ, ո եւ է պատճառաւ, վերոյիշեալ անձերէն մին, հրաւիրադրին մէջ նշանակուած թուականէն առառաւելն մէկ ամսուան պայմանաժամի մէջ չի կարենայ ներկայանալ Կեղրոնական Վարչական ժողովին կեղրոնատեղին, քուէարկութեան մասնակցելու համար, այդ պարագային ներկայ անդամներուն խորհրդակցութիւնները օրինաւոր պիտի նկատուին եւ անոնք պիտի կրնան, ձայներու մեծամասնութեամբ, ընտրել այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հայաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը որ պիտի յաջորդէ Միութեան, կը բաւէ որ, առաջին գումարման, ներկայ եղող անդամներուն թիւը ամբողջ անդամներու թիւին կէսէն մէկ աւելի ըլլայ, եւ, երկրորդ գումարման, որ, առաջնոյն մեծամասնութիւն չգոյանալուն պատճառաւ, տեղի պիտի ունենայ տասնըհինգ օր վերջ եւ տասը օր առաջ ծանուցագրով մը, առնուազն հինգ անդամ ներկայ գտնուի:

Վերջապէս այն պարագային որ յիշեալ Յանձնախումբը չի կարենայ գումարուիլ ո եւ է պատճառաւ, կամ, գումարուելէ վերջ, չի կարենայ որոշման մը յանդիլ, վերոյիշեալ կազմակերպութիւններէն կամ անձերէն ո եւ է մէկը իրաւունք պիտի ունենայ Հ. Բ. Ը. Միութեան լուծման եւ անոր յաջորդելիք Հայկական Ընկերակցութեան, Հաստատութեան, կամ Հայաստանի Պետութեան Վարչութեան ընտրութեան հարցը ենթարկել Հ. Բ. Ը. Միութեան Կեղրոնատեղին եղող Լօգանի Դաշնակցային Դատարանի նախագահին, եւ եթէ այս Դատարանը գոյութիւն չունենայ, Անդլիոյ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին կողմէ նշանակուած իրաւարարի մը իրաւարարութեան:

Հ. Բ. Ը. Միութիւնը իր Հիմնական Դրամագլուխին մէկ մասը Թրսթի (Trust) վերածած ըլլալով, եթէ վերոյիշեալ անձերէն կամ կազմակերպութիւններէն մին իրաւարարութիւն յառաջ չի բերէ, այն ատեն Թրսթիին (Trustee) — որ չի կրնար անդործածելի

Թողուլ թրըսթին եկամուտները որ որոշ նպատակներու յատկացուած-  
են — անկ պիտի ըլլայ դիմել իրաւարարութեան, նշանակելու հա-  
մար այն Հայկական Ընկերակցութիւնը, Հաստատութիւնը կամ Հա-  
յաստանի Պետութեան մէջ այն Վարչութիւնը, որուն թրըսթին պար-  
տի յանձնել թրըսթին եկամուտները:

Երկու պարագային մէջ ալ, իրաւարարական վճիռը վերջնական  
եւ անվերաքննելի պիտի ըլլայ, եւ ծախքերն ալ թրըսթը պիտի  
ստանձնէ:

---

---

Ներկայ Կանոնագրին մէջ կատարուած փոփոխութիւնները 1924 ին  
ասդին բուհարկուած են Միութեան Ընդհանուր Ժողովին կողմէ՝ իր  
18 Նոյեմբեր 1925, 19 Նոյեմբեր 1926, 18 Նոյեմբեր 1927, 19 Հոկտեմ-  
բեր 1928, 11 Յուլիս 1930, 16 Սեպտեմբեր 1932, 22 Սեպտեմբեր 1933  
եւ 15 Հոկտեմբեր 1936 բուականին սեղի ունեցած նիսերուն մէջ:



Գեղարվեստական Տպարան Խ. Մաթիկան



, 50

43.095

u.s. 8M

8M 0

5 hens